Արմինե Աշիկյան

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Բանալի բառեր - անձի ձևավորում, սոցիալականացում, արժեքային համակարգ, սոցիալ-մշակութային միջավայր, զարգացում, ընտանեկան դաստիարակություն:

Արդի դարաշրջանի գլոբալացման պայմաններում Հայաստանի նման աշխարհաքաղաքական դիրք ունեցող պետության համար անհնար է զերծ մնալ քաղաքակրթությունների բախմամբ պայմանավորված կողմնակի ազդեցություններից: Վերջիններս ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն են ունենում հայ մարդու ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա:

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, մեր օրերում հայկական առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, իսկ արժեքային պատկերացումները հիմնովին փոխվել են: Թեպետ ազատության և պետականության ամրապնդմանը զուգընթաց սոցիալ-մշակութային արժեքները ենթարկվել են որոշակի կանոնակարգման, այնուամենայնիվ հիմնական շեշտադրումն ուղղված է դեռևս օտարամուտ նորամուծությունների վերարտադրմանը: Այսինքն էթնոմշակութային առանձնահատկությունները հաճախ մղվում են հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին ինֆորմացիայի համար: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների դերակատարությունը ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում:

Հասարակությունը ներկայացնում է տարբեր սոցիալական ինստիտուտների ամբողջություն, որոնք սերտորեն փոխկապակցված են և գտնվում են փոխհամաձայնության մեջ: Սոցիալական յուրաքանչյուր ինստիտուտ նախատեսված է որոշակի սոցիալական պահանջմունքների բավարարման համար: Այսպես, «կրթություն», «մշակույթ», «կրոն», «ընտանիք» և այլ սոցիալական ինստիտուտների միջոցով երեխան անցնում է սոցիալականացման գործընթացի հիմնական փուլերը՝ անհատից դառնալով անձ և վերածվելով անհատականության: Եվ ինչպես գերմանացի գիտնական Դյուրկհեյմն էր ասում. «Հիշյալ սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է»[1], որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը[2]:

---

[1] www. Grandars.ru/socologiya/socologiya-dyukgema.html.

[2] Ա. Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան, 2003, էջ 29:

Նշյալ սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են թե՛ հասարակությունը, թե՛ պետությունը: Այն մեզանում ազգապահպան վճռորոշ գործոններից է, հասարակության սոցիալ-տնտեսական և ազգային-մշակութային գործառույթների իրականացման հիմնական օղակը: Այստեղ է ծնվում երեխան, սկսվում անձի ձևավորումը, զարգացումն ու դաստիարակությունը, այստեղ է երեխան յուրացնում սոցիալական դերերը, որոնք անհրաժեշտ են հասարակական գործունեությունն արդյունավետ իրականացնելու համար: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական, վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին: Ըստ Ն. Նյուկոմբի՝ «Յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր ծնող իր երեխային դաստիարակում է յուրահատուկ անհատական մոտեցումներով… Դաստիարակման ընթացքի վրա շատ է ազդում ընտանիքի այս կամ այն մշակույթի պատկանելիությունը… Տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթները, ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության վրա»[1]: Այլ խոսքով, ազգային, համամարդկային և հասարակական բարոյական արժեքներին երեխան սկսում է ծանոթանալ ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերությունների շնորհիվ: «Ընտանիք» սոցիալական ինստիտուտում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, նրա մշակութային զարգացումը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով ու վարքագծով, կարևորվում են նրանց արժեքային կողմնորոշումները, որոնք երեխայի համար ընդօրինակման առաջին նմուշներ են: Երեխաները ընդօրինակելով ծնողների վարքագծային մոդելները՝ ներքնայնացնում են դրանք, համապատասխանեցնում իրենց անձին, որի հիման վրա էլ ձևավորվում է վարքագիծը, արժեքային համակարգը: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողն ու ժառանգորդը, որոնց հիման վրա էլ ձևավորվում է նրա աշխարհայացքը:

Աճող սերնդի՝ որպես ընտանեկան արժեքների կրողի նշանակալիությունը մշակույթում ընդգծվում է նաև նրանով, որ նրանք մարմնավորում են ապագա մարդկությանը: Յուրաքանչյուր արժեք կարող է բնութագրվել որպես հավերժական, բացարձակ և համամարդկային միայն այն դեպքում, երբ կապված է ապագայի հետ և լի է հնարավորություններով[2]:

Ինտեգրվելով եվրոպական համայնքին՝ ներմուծվում են եվրոպական արժեքներ, որոնք շատ հաճախ չեն տեղայնացվում, չեն համապատասխանեցվում ազգային առանձնահատկություններին, որն էլ խանգարում է ընտանեկան հարաբերությունների նորմալ ընթացքին, մասնավորապես՝ երեխայի դաստիարակության գործընթացին:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով: Յուրաքանչյուր սերունդ ունի իր արժեքային

[1] Ньюкомб Н., Развития личности ребенка, Санкт-Петербург, 2003, с. 394-396.

[2] Տե՛ս Гриценко Г.Д., Часовская Л.А., Подрастающее поколение как «руппа риска» в современном российском обществе, Ставрополь, Исд., СГПИ, 2009, с. 51.

կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները: Բնական է, որ ծնողների կողմից ընդունված հասարակական կյանքի նորմերը տարբերվում են հաջորդ սերնդի հայացքներից, որոնք կարող են միջանձնային հարաբերություններում դրսևորվել ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով: Հարկ է նշել, որ տարիքի հետ ավագ սերնդի կողմից աստիճանաբար փոքրանում է նորին հարմարվելու հնարավորությունները և այդ նորը չի ընկալվում, չի յուրացվում նույնչափ արագ, ինչպես երիտասարդների կողմից: Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ ձևավորելով արժեքային նոր համակարգ, որը արմատապես կարող է տարբերվել նախորդից և առաջացնել միջսերնդային հակասություններ: Բնականաբար, այս տարաձայնությունները անհետևանք չեն կարող մնալ և խանգարում են անձի ձևավորման գործընթացին, հանգեցնում մի շարք շեղումների: Ինչ խոսք, պետք է քայլել ժամանակին համընթաց, բայց երբեք չպետք է մոռանալ ազգայինը: Այսօր հայ որոշ ընտանիքներ ընդօրինակում և փորձում են նմանվել ընտանիքի արևմտյան մոդելին, մինչդեռ որպես երեխայի անձի ձևավորման և սոցիալականացման առաջնային միավոր, ընտանիքի ամենաանշան վերափոխումն անմիջապես անդրադառնում է հասարակության կառուցվածքի վրա: Անշուշտ հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը, և այդ նորը պետք է համալրի եղած արժեքները, բայց ոչ մերժողական վերաբերմունք եղածի նկատմամբ: Այստեղ է, որ կարևորվում է ընտանիքի դերակատարությունը որպես ավանդական արժեքների վերարտադրող և ժամանակակից պայմաններին համապատասխան նոր արժեքների կրող:

Սերնդի սոցիալ-մշակութային արժեքների ձևավորումը կախված է նաև հասարակությունից: Վերջինս «հոգևոր օդ է, առանց որի, ինչպես առանց սովորական օդի, մարդը շնչել, այսինքն գոյություն ունենալ չի կարող»[1]: Ծուկայական ազատ պայմաններում, ցավոք, մեր հասարակություն են ներթափանցել օտարածին, մեր ազգին ոչ հարիր արժեքներ, որոնք այս կամ այն կերպ խաթարում են երեխայի անձի ձևավորման գործընթացը, դաստիարակությունը, նրա կողմից էթնիկական առանձնահատկությունների ճանաչումն ու արժևորումը: Հատկապես անկախացման տարիներին «ընտանիք» սոցիալական ինստիտուտը ենթարկվեց մշակութային լուրջ փոփոխությունների: Փոփոխությունն ինքնին դրական երևույթ է, սակայն կարևոր է, երբ դա կազմում է բնականոն գործընթացի մաս: Եթե փոփոխությունները տեղի են ունենում այդ համատեքստից դուրս, ապա խաթարվում է հանրության, այդ թվում նաև էթնիկ հանրույթի առանձին հատվածների միջև հոգևոր ընդհանրականություն ձևավորող արժեքային համակարգի համախմբիչ դերը: Նշվածի հիմնական պատճառն արագ կատարվող փոփոխությունների ընթացքում համընդհանուր արժեքների ձևավորման բարդությունն է: Ստեղծված ոչ կայուն իրավիճակը խոչընդոտում է նման դերակատարության արժեքների վերարտադրությանը, քանի որ հաճախ ներմուծվող ժամանակավոր արժեքները նեղացնում են համընդհանուր գործառություն ունեցող արժեքների հանրային ընդգրկման շրջանակները: Հետևապես մեր հասարակության մեջ գնալով ավելի մեծ դեր են ստացել տարանջատող խմբային արժեքները, քան համախմբող համընդհանուր՝ ազգային, պետական ու քաղաքացիական բովանդակու-

[1] Семейное воспитание, Хрестоматия, сост. П. А.Лебедев, М., 2001, с. 373.

թյան արժեքները: Եվ այնպիսի իդեալական արժեքներ, ինչպիսիք են ազգը, հայրենիքը, ընտանիքասիրությունը, մշակույթը, գիտությունը, ազգային պատմությունը, պատմական արժեքները հանրային վարքում ստորադասվել են իրական այնպիսի արժեքների, ինչպիսիք են փողը, նյութական շահը, ազդեցիկ դիրք ապահովող պաշտոնը, նեղ ընտանեկան կամ ազգակցական ու մասնավոր կապերով պայմանավորված այլ խմբակային շահերը և այլն: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ նյութական բոլոր արժեքները չափազանց փոքր են ազգային այն արժեքների դիմաց, որոնց շնորհիվ գոյատևում ենք այսօր և առանձնանում մյուսներից: Ուստի, կարծում ենք, որ նախ անհրաժեշտ է ազատությունը ճիշտ ընկալել ու դրանից խելամտորեն օգուտ քաղել: Մեր ազգային արժեքները խոցելի են այնքան ժամանակ, քանի դեռ մենք լիարժեք չենք գիտակցում մեր ազատության գինը և, միաժամանակ, վերջինիս բազմաթիվ դրսևորումներն էլ քննադատական վերանայման չենք ենթարկում:

Փաստորեն, Հայաստանը մշակութային ամբողջականության պահպանման ու վերարտադրման առումով լուրջ անելիքներ ունի: Հայտնվելով մշակութային համաշխարհայնացման հոսքի մեջ՝ անհրաժեշտ է ոչ միայն մեխանիկական կրողի դեր ունենալ, այլև ստեղծել մասնակցային արժեքներ: Իսկ վերջինիս ստեղծումը պայմանավորված է միայն մշակութային ինքնատիպ ստեղծագործական ներուժի հայտնաբերմամբ ու կիրառմամբ:

Армине Ашикян, Семья как социально-культурная среда формирования и развития личности ребенка, - Ценностные представления в современных условиях изменились. Оказываясь в потоке культурной глобализации, необходимо не только иметь роль механического носителя, но и создавать ценности посредством своего участия. В вышеуказанной проблеме мы выделяем роль семьи, где ребенок, усваивая ценности семейно-культурной среды, становится носителем и преемником именно этих ценностей, формируется мировоззрение.

Armine Ashikyan, Family as Social-Cultural Environment for the Formation and Development of a Child's Personality, - The value notions are changed in current conditions. Going to the cultural globalization, it is necessary not only to have an active role in that processes, but also create participative values. In this issue we have highlighted the role of family, where child assimilates family cultural values, and becomes a bearer and an inheritor of those values.

Արմինե Աշիկյան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ: